ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «29» 09 2020թ № 1249-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի № 512-Ա ՀՐԱՄԱՆԻ ԵՎ Ն-01 ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 33-րդ և 34-րդ կետերով և հիմք ընդունելով «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի տնօրենի 2020 թվականի մայիսի 19-ի «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիայի արտահերթ գնահատման խումբ ստեղծելու և արտահերթ գնահատում իրականացնելու մասին»» N 3-ԱԳ և «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի տնօրենի 2020 թվականի հուլիսի 2-ի ««Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիայի արտահերթ գնահատման խումբ ստեղծելու և արտահերթ գնահատում իրականացնելու մասին»» N 4-ԱԳ հրամանների հիման վրա իրականացված արտահերթ գնահատումների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները.

**հրամայում եմ.**

1. 30 օրով կասեցնել «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2017 թվականի հունիսի 6-ի № 512-Ա հրամանի և Ն-01 նշանակման վկայականի գործողությունը:

2. Սույն հրամանի ընդունումից հետո եռօրյա ժամկետում ծանուցել «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային:

3. «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային կասեցման մասին որոշումն ստանալուց հետո մինչև կասեցման ժամկետի ավարտը վերացնել կասեցման համար հիմք հանդիսացած խախտումները՝ անվավեր ճանաչելով N AM.01.48.01.004.R.000216.10.19 առ 31.10.2019, N AM.01.48.01.004.R.000217.10.19 առ 31.10.2019, N AM.01.48.01.004.R.000218.10.19

առ 31.10.2019 պետական գրանցման վկայականները և դրանց հիմքում ընկած N СГР-221 առ 17.10.2019, N СГР-222 առ 17.10.2019, N СГР-223 առ 17.10.2019 փորձարկման արձանագրությունները, ինչպես նաև N ԵԱՏՄ AM-020/S.B-0823-2019 առ 09.08.2019 համապատասխանության հայտարարագրի հիմքում ընկած N 1859 առ 09.08.2019 փորձարկման արձանագրությունը:

4. Սույն հրամանի 3-րդ կետով սահմանված պետական գրանցման վկայականները և դրանց հիմքում ընկած փորձարկման արձանագրություններն անվավեր ճանաչելուց հետո համապատասխան տեղեկատվությունը ծանուցել հայտատուին, պարենային արտադրանքի ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող և պետական գրանցման վկայականների միասնական ռեեստր վարող լիազոր մարմնին, իսկ համապատասխանության հայտարարագրի հիմքում ընկած փորձարկման արձանագրության անվավեր ճանաչելու վերաբերյալ տեղեկատվությունը ծանուցել հայտատուին և համապատասխանության հայտարարագիր գրանցած «Էմ-Ջի Էքսպերտ» ՍՊԸ:

5. «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային՝ մինչև սույն հրամանի 1-ին կետով սահմանված կասեցման ժամկետի ավարտը դադարեցնել համապատասխան բնագավառում համապատասխանության գնահատման աշխատանքները՝ ապահովելով Հավելվածի 37-րդ կետով սահմանված պահանջը:

6. Մինչև սույն հրամանի 1-ին կետով սահմանված կասեցման ժամկետի ավարտը կասեցման համար հիմք հանդիսացած խախտումների վերացման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Սիմոնյանին:

8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային իրազեկելու օրվան հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ օրենքով սահմանված ժամկետներում:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ